



Ավետիք Իսահակյան

Հովհաննես Շիրազին, 1937թ. , օգոստոսի 20, Սևան

Միրելի Շիրազ.

Ստացել եմ սրտագին նամակդ. ներիր, որ ուշ եմ պատասխանում, այսօրն-վաղն էի ձգում. վերջապես այսօր գրում եմ, և մի երկու օրից հետո Երևան եմ գնում, այնտեղ կհանձնեմ փոստին:

Շա՛տ ծույլ եմ նամակ գրելու մեջ. ներո՛ղ եղիր:

Նախանձում եմ քեզ, որ թափառում ես իմ սիրելի Արփաշայի ափերում, Ալագյազի հովիտներում, Շիրակի երկնքի տակ. նախանձում եմ նաև, որ սիրո վիշտն ունես.- դրանցից ավելի բան չպիտի ունենա իսկական բանաստեղծը – սեր, վիշտ, բնություն, հայրենիք, և գաղափարական մտաշխարհ: Այդ բոլորը դու ունես, և վրան էլ ավելացրու մատաղ հասակ, նոր բխող աղբյուր. – ուրեմն ստեղծագործի՛ր, սավառնի՛ր, թռի՛ր:

Սևանում բավական լավ ժամանակ անցրի, թեև շա՛տ խրժուրժ կար, շա՛տ աղմկող երեխաներ, բայց նորեն գեշ չանցավ: Չքնաղ ծովակ, հրաշալի երկինք, անհամար ադամանդային աստղեր, և այդ բոլորը իմս էր, կարող էի վայելել ու վայելեցի:

Գրեցի մի փոքր պոեմա և մի-երկու փոքր ոտանավորներ: Սակայն շատ կարդացի: Լողացա, թափառեցի լճի վրան ու կղզու շուրջը, կարդացի, խորհեցի: “Մհերի” վերջը վաղուց է ավարտել եմ և հանձնել եմ “Խորհրդային գրականությանը”. Այս ամսում կեսը կիրատարակվի, կեսն էլ՝ մյուս ամսում. հետո՝ առանձին գրքույկով: Հարցնում ես, թե գո՞հ ես. երևակայիր, որ գեշ դուրս չեկավ, բավականին հաջող է և գոհ եմ: Ինչ որ գրում ես “Ուստա Կարոյի” մասին, ճշմարիտ է, բայց պիտի ժամանակ ստեղծեմ, որ ինքնամփոփ, բոլորանվեր, ժողովներով, վեճերով, և այլն, և այլն:

Հույս ունեն, որ գլուխ կբերեն այս իմ խորին տնենչանքս: Այս տարի, ո՛ր չ-ուշ
Սևանից վերադարձիս՝ մի քանի օր կմնամ Երևանում և կգնամ Լենինական. Քեզ
կհայտնեն, եթե դու այդտեղ լինես և ոչ թե Երևանում:

Չերմագին բարևներով, Քո Ավետիք Իսահակյան՝

Հ. Գ. Այսօր եկա Երևան, և կարդացի “Բնեռի առումը” գրվածքդ, շա՛տ և շա՛տ
լավն է. մեծ թափով ես գրել, շքեղ պատկերներ կան, հոյակապ բան է, միայն մի
քիչ երկարախոսություն կա, մի-երկու անտեղի, ավելորդ տողեր

Ապրիս, գորանաս

Ա. Ի.